# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք


*Նիստ թիվ 3* *«29» ապրիլի 2019 թ.*

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 34

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 29-ի թիվ 3 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2019 թվականի թիվ 3 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրում, համայնքային սեփականություն հանդիսացող հողում գտնվող կիսաչոր բարդիների հատման համար թույլտվություն տալու մասին:
3. Գույքահարկի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի բնակիչ Ղևոնդ Ռաֆիկի Գասպարյանի կողմից ներկայացրած դիմումի քննարկման մասին:
4. Դրամական հատկացումներ կատարելու մասին:
5. Գլաձոր համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի 1-ին եռամսյակի ընթացքի հաղորդման մասին:
6. Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.32 հա արոտավայրը աճուրդով օտարելու համար համաձայնություն տալու մասին:
7. Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող <<Բարձրավոլտ էլեկտրացանցեր>> ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողի նպատակային նշանակությունը փոխելու համար համաձայնություն տալու մասին:
8. Գլաձոր համայնքի հաշվեկշռում առկա չօգտագործվող խմելու ջրի խողովակաշարից ապամոնտաժելու և օգտագործելու համար թույլտվություն տալու մասին:
9. Գույքահարկի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչ Անուշ Համազասպի Դիլաքյանի կողմից ներկայացրած դիմումի քննարկման մասին:
10. Հողի հարկի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի բնակիչ Սուրեն Սիրեկանի Խաչատրյանի կողմից ներկայացրած դիմումի քննարկման մասին:

11. Գլաձոր համայնքի բնակիչների կողմից ներկայացված հանրագրում նշված առաջարկությանը հավանություն տալու մասին:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 3 «29» ապրիլի 2019 թ.

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 35

### ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԻՍԱՉՈՐ ԲԱՐԴԻՆԵՐԻ ՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ թույլտվություն Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրում, համայնքային սեփականություն հանդիսացող հողում գտնվող 2 /երկու/ կիսաչոր բարդիները հատելու համար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված բարդիները գտնվում են կիսաչոր վիճակում, ուժեղ քամիների ժամանակ կարող են ընկնել՝ վնաս պատճառելով շրջակա միջավայրին և մարդկանց:
2. Բարդիները հատելուց հետո, որպես վառելափայտ՝ օգնության կարգով տրամադրել Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչ՝ սոցիալապես անապահով, բազմազավակ Ալիկ Մարգարյանի ընտանիքին:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

*Նիստ թիվ 3* *«29» ապրիլի 2019 թ.*

***ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 36***

**ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐՆԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՂԵՎՈՆԴ ՌԱՖԻԿԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի բնակիչ՝ Ղևոնդ Ռաֆիկի Գասպարյանի կողմից ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության 15-րդ հոդվածով սահմանված պահանջներին, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետի պահանջը՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1.Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի բնակիչ Ղևոնդ Ռաֆիկի Գասպարյանի կողմից գույքահարկի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ ներկայացրած դիմումը մերժել:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք


*Նիստ թիվ 3* *«29» ապրիլի 2019 թ.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 37-Ա*

## ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Գլաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 45-Ա որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետի պահանջը՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի 2019 թվականի բյուջեի 10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից.

1. Մեծ Հայրենականի հաղթանակի 74 ամյակի և Շուշիի ազատագրման 27-րդ ամյակի կապակցությամբ դրամական օգնություն տրամադրել՝

1) Մեծ Հայրենականի մասնակիցներ՝

Գլաձոր բնակավայրի բնակիչ Քյարամ Գաբրիելի Սարգսյանին՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ
Գետափ բնակավայրի բնակիչ Խորեն Սերգեյի Հարությունյանին՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ

2) Արցախի ազատամարտի մասնակիցներ, զոհվածների հարազատներ՝

Գլաձոր բնակավայրի բնակիչ Վարսիկ Զարեհի Բադալյանին՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ
Գլաձոր բնակավայրի բնակիչ Թամամ Ջանշիկի Բադալյանին՝ 20 000 /քսան հազար/ դրամ
Գլաձոր բնակավայրի բնակիչ Վարդգես Ռազմիկի Հովհաննիսյանին՝ 20 000 /քսան հազար/ դրամ
Գլաձոր բնակավայրի բնակիչ Վարդան Արամի Գրիգորյանին՝ 20 000 /քսան հազար/ դրամ
Գլաձոր բնակավայրի բնակիչ Անդրանիկ Ներսեսի Նիկողոսյանին՝ 20 000 /քսան հազար/ դրամ
Գլաձոր բնակավայրի բնակիչ Արսեն Բաբկենի Աղաբեկյանին՝ 20 000 /քսան հազար/ դրամ
Գլաձոր բնակավայրի բնակիչ Արսեն Ժորայի Գալստյանին՝ 20 000 /քսան հազար/ դրամ
Վերնաշեն բնակավայրի բնակիչ Գուրգեն Մաքսիմի Ադամյանին՝ 20 000 /քսան հազար/ դրամ
Վերնաշեն բնակավայրի բնակիչ Դերենիկ Ղուկասի Եսայանին՝ 20 000 /քսան հազար/ դրամ
Վերնաշեն բնակավայրի բնակիչ Խաչանուշ Քրիստաֆորի Խաչատրյանին՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ
Գետափ բնակավայրի բնակիչ Ռոզա Սարգսի Բաղդասարյանին՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ
Գետափ բնակավայրի բնակիչ Նաիրա Ռազմիկի Հարությունյանին՝ 30 000 /երեսուն հազար/

դրամ
Գետափ բնակավայրի բնակիչ Սոֆիկ Եգորի Գևորգյանին՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ
Գետափ բնակավայրի բնակիչ Սամվել Աղվանի Հովհաննիսյանին՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ
Գետափ բնակավայրի բնակիչ Սիլվա Բալաբեկի Ասրյանին՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ
Գետափ բնակավայրի բնակիչ Յուրա Սուրիկի Ավետիսյանին՝ 20 000 /քսան հազար/ դրամ
Գետափ բնակավայրի բնակիչ Վահե Վահրամի Մուրադյանին՝ 20 000 /քսան հազար/ դրամ
Գետափ բնակավայրի բնակիչ Սերոբ Դմիտրիի Վարդանյանին՝ 20 000 /քսան հազար/ դրամ
Գետափ բնակավայրի բնակիչ Սիրան Սուրենի Մովսիսյանին՝ 20 000 /քսան հազար/ դրամ
Գետափ բնակավայրի բնակիչ Վարազդատ Հրանտի Հովսեփյանին՝ 20 000 /քսան հազար/ դրամ
Գետափ բնակավայրի բնակիչ Վարուժան Մուշեղի Մարգարյանին՝ 20 000 /քսան հազար/ դրամ
Գետափ բնակավայրի բնակիչ Միեր Գերասիմի Վարդանյանին՝ 20 000 /քսան հազար/ դրամ
Գետափ բնակավայրի բնակիչ Հուսիկ Հովմիրի Ամիրյանին՝ 20 000 /քսան հազար/ դրամ
Գետափ բնակավայրի բնակիչ Սմբատ Վանուշի Գրիգորյանին՝ 20 000 /քսան հազար/ դրամ
Գետափ բնակավայրի բնակիչ Աղվան Անուշավանի Ստեփանյանին՝ 20 000 /քսան հազար/ դրամ
Գետափ բնակավայրի բնակիչ Եփրեմ Սիրասի Գևորգյանին՝ 20 000 /քսան հազար/ դրամ:

2. <<Դիակոնիա>> բարեգործական հիմնադրամի կողմից Գլաձոր համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին հատկացվող սնունդը Երևանից Գլաձոր տեղափոխելու համար համայնքի բնակիչ Սևակ Սայադյանին տրամադրել 40 000 /քառասուն հազար/ դրամ:

3. Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի սոցիալապես անապահով բնակիչ Սասուն Մարգարյանին, որպես օգնություն տրամադրել 120 000 /մեկ հարյուր քսան հազար/ դրամ:

Ընդամենը՝ 850 000 /ութ հարյուր հիսուն հազար/ դրամ:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

*Նիստ թիվ 3* «29» ապրիլի 2019 թ.

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 38

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Գլաձոր համայնքի ղեկավարի կողմից ներկայացված՝ 2019 թվականի տարեկան բյուջեի 1-ին եռամսյակի ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

| **Ավագանիներ** | **Կողմ** | **Դեմ** | **Ձեռնպահ** |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ Վայոց ձոր մարզի
Գլաձոր համայնքի ավագանու
2019թ. ապրիլի 29-ի թիվ 38 որոշման

**Եկամտային մաս**

| ՀՀ | Եկամտատեսակ | Տարեկան պլան | Նախատեսված /I եռամսյակ/ | Կատարողական /I եռամսյակ/ | Կատարման տոկոս |
|---|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 7000.0 | 1750.0 | 661.5 | 37.8 |
| 2 | Գույքահարկ | 20100.0 | 5025.0 | 4123.0 | 82 |
| 3 | Տեղական տուրքեր | 800.0 | 200.0 | 439.8 | 219 |
| 4 | ընդամենը հողի վարձակալությունից եկամուտներ | 2200.0 | 550.0 | 369.0 | 67.1 |
| 5 | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 130445.4 | 32611.0 | 32611.0 | 100 |
| 6 | Այլ մուտքեր /խմելու ջուր/ | 6000.0 | 1100.0 | 754.0 | 68.5 |
| 7 | Ծնողական մուծում | 7000.0 | 700.0 | 708 | 101 |
| 8 | Աղբահանություն | 5500.0 | 1375.0 | 436.0 | 31.7 |
| | Ընդամենը | 179045.4 | 43311.0 | 40102.3 | 92 |

**Ծախսային մաս**

| ՀՀ | Ծախսերը | Հոդված | Նախատեսված /տարեկան/ | Կատարողական / I եռամսյակ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 44000.0 | 10595.6 |
| 2 | Էներգետիկ ծառայություններ | 4212 | 5500.0 | 1290.4 |
| 3 | Կապի ծառայություններ | 4214 | 500.0 | 101.4 |
| 4 | Գործուղումների և շրջագայությունների ծախսեր | 4221 | 500.0 | 52.0 |
| 5 | Համակարգչային ծառայություններ | 4232 | 400.0 | 0.0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6 | Տեղեկատվական ծառայությունների ձեռք բերում | 4234 | 200.0 | 0.0 |
| 7 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 1500.0 | 100.0 |
| 8 | Մասնագիտական ծառայություն | 4241 | 1400.0 | 27.0 |
| 9 | Շենքների և շինություն, վերանորոգում, շինարարություն | 4251 | 32000.0 | 12850.9 |
| 10 | Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ | 4252 | 300.0 | 0.0 |
| 11 | Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 1700.0 | 0.0 |
| 12 | Տրանսպորտային նյութեր | 4264 | 2200.0 | 200.0 |
| 13 | Կենցաղային նյութեր, հանրային սնունդ | 4267 | 200.0 | 0.0 |
| 14 | Հատուկ նպատակային նյութեր | 4269 | 2500.0 | 350.4 |
| 15 | Դրամաշնորհներ | 4637 | 69500.0 | 15702.0 |
| 16 | Այլ կապիտալ դրամաշնորհներ | 4657 | 3200.0 | 3200.0 |
| 17 | Սոցիալական նպաստներ | 4729 | 4500.0 | 1000.0 |
| 18 | Նվիրատվություն շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 4819 | 65.0 | 0.0 |
| 19 | Պարտադիր վճարներ | 4823 | 100.0 | 2.0 |
| 20 | Շենքերի և շինությունների շինարարություն | 5112 | 8000.0 | 0.0 |
| 21 | Շենքերի և շինությունների կապիտալ նորոգում | 5113 | 10500.0 | 0.0 |
| 22 | Վարչական սարքավորումներ | 5122 | 272.7 | 0.0 |
| 23 | Նախագծահետազոտական աշխատանք | 5134 | 2500.0 | 0.0 |
| | Ընդամենը | | 191537.7 | 45471.7 |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

*Նիստ թիվ 3* *«29» ապրիլի 2019 թ.*

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 39

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.32 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67 հոդվածի պահանջներով՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Տալ համաձայնություն Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.32 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը՝ կադաստրային ծածկագիր 10-015-0150-0084, 1 լոտով աճուրդային կարգով օտարելու համար:

2. Օտարվող հողի մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 59200 /հիսունինը հազար երկու հարյուր/ դրամ:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ սահմանված կարգով անցկացնելու աճուրդ-վաճառք:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

*Նիստ թիվ 3* «29» ապրիլի 2019 թ.

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 40

### ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐՆԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ <<ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ>> ՓԲԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և <<Բարձրավոլտ էլեկտրացանցեր>> ՓԲԸ-ի <<ԷՕԿՏ>> մասնաճյուղի տնօրենի կողմից ներկայացված դիմումը՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրում գտնվող <<Բարձրավոլտ էլեկտրացանցեր>> ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.0159 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-042-0160-0022/ վարելահողը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա փոխադրելու համար, գործառնական նշանակությունը՝ <<էներգետիկայի>> հողեր՝ 400 կՎ էլեկտրահաղորդման օդային գծի հենասյուն կառուցելու համար:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

*Նիստ թիվ 3* *«29» ապրիլի 2019 թ.*

**ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 41**

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԱՌԿԱ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԻՑ ԱՊԱՄՈՆՏԱԺԵԼՈՒ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Տալ թույլտվություն Գլաձոր համայնքի հաշվեկշռում առկա, Գետափ բնակավայրի 18-րդ փողոցի 9-րդ փակուղու 2-րդ տան հարևանությամբ գտնվող, չօգտագործվող խմելու ջրի խողովակաշարից՝ 6 դյույմ տրամագծով, մոտավորապես 15 մ երկարությամբ երկաթյա խողովակը ապամոնտաժելու և օգտագործելու համար:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

*Նիստ թիվ 3* *«29» ապրիլի 2019 թ.*

### ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 42-Ա

### ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՆՈՒՇ ՀԱՄԱԶԱՍՊԻ ԴԻԼԱՔՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչ՝ Անուշ Համազասպի Դիլաքյանի կողմից ներկայացրած դիմումում նշված պահանջը չի համապատասխանում <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության 15-րդ հոդվածով սահմանված պահանջներին, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետի պահանջը՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչ Անուշ Համազասպի Դիլաքյանի կողմից գույքահարկի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ ներկայացրած դիմումը մերժել:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք


*Նիստ թիվ 3* *«29» ապրիլի 2019 թ.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 43-Ա*

## ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՍՈՒՐԵՆ ՍԻՐԵԿԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչ՝ Սուրեն Սիրեկանի Խաչատրյանի կողմից ներկայացրած դիմումում նշված պահանջը չի համապատասխանում <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության 10-րդ հոդվածով սահմանված պահանջներին, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետի պահանջը՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչ Սուրեն Սիրեկանի Խաչատրյանի կողմից հողի հարկի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ ներկայացրած դիմումը մերժել:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ RA VAYOTS DZOR GLADZOR MUNICIPALITY *08914325*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

*Նիստ թիվ 3* — *«29» ապրիլի 2019 թ.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 44*

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՆՐԱԳՐՈՒՄ ՆՇՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Հանրագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ն մասի 3-րդ կետով, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով շարադրված տեղական ինքնակառավարման սկզբունքներով, հիմք ընդունելով Գլաձոր համայնքի ավելի քան երկու հազար բնակիչների կողմից ներկայացված հանրագիրը՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հավանություն տալ Գլաձոր համայնքի բնակիչների՝ 2019 թվականի ապրիլի 19-ին համայնքի ղեկավարին և ավագանուն ներկայացրած «Գլաձոր համայնքը էկո-տնտեսական տարածք դարձնելու և համայնքում մետաղական հանքարդյունաբերությունը արգելելու վերաբերյալ» կոլեկտիվ հանրագրում նշված առաջարկությանը:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**